

ՑԱՆԿ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՀԱՅՏԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

- 1) անձը հաստատող փաստաթղթի, նույնականացման քարտի պատճենները և էլեկտրոնային փոստի հասցեն.
- 2) հինգ գունավոր լուսանկար /3x4 չափի/.
- 3) կենսագրական տվյալները պարունակող քարտ.
- 4) նոտարական կարգով հաստատված բանավոր հայտարարություն դատվածության և սնանկության կամ դրանց բացակայության մասին.
- 5) իրավաբանական կրթության՝ պահանջվող որակավորման աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթ.
- 6) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ /ատեստատ կամ դիպլոմի ներդիր/.
- 7) պահանջվող օտար լեզուների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ.
- 8) պահանջվող մասնագիտական աշխատանքի փորձառությունը հավաստող ապացույց, այդ թվում՝ աշխատանքային պարտականությունները հավաստող պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր.
- 9) արական սեռի հավակնորդի դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ.
- 10) դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ /տեղեկանքը տրվում է հաշվառման վայրի բժշկական հաստատությունից, ինչպես նաև առանձին տեղեկանքներ՝ հոգեբուժական, թմրաբանական և հակատուբերկուլյոզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից /Կառավարության 2019թ. մայիսի 30-ի N 685-Ն որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141551> //.
- 10) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևով համաձայնություն՝ իր վերաբերյալ պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից, հավակնորդին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգման սահմաններում, անհրաժեշտ անձնական տվյալներ, այդ թվում՝ բժշկական գաղտնիք հանդիսացող և այլ տեղեկություններ ստանալու մասին.
- 11) առավելագույնը երեք երաշխավորագիր-նամակ՝ ըստ հավակնորդի ցանկության.
- 12) օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիր.
- 13) գրավոր հայտարարություն հայտում առկա տեղեկությունների և կից ներկայացված փաստաթղթերի հավաստիության մասին.

13.1)բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ

/ <https://drive.google.com/file/d/1TM0ktUcvh8gsfChRNF5nnLonMY-Dr3ae/view> /.

14) ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից տրված տեղեկանք՝ միայն ՀՀ քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ.

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 106-րդ հոդվածում, 123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետում և 132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անձանց համար մասնագիտական աշխատանքի փորձառություն է բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունքի դասավանդումը կամ գիտական հաստատությունում իրավունքի ոլորտում կատարած գիտական աշխատանքը:

Վերը նշված բոլոր փաստաթղթերի բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել պատճենների հետ միասին: